ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

The characteristic of the basic tendencies of development of foreign trade of the Republic of Artsakh, and the dynamics of the main indicators of foreign trade, the main partner-countries, the correlation analysis of the impact of exports and imports on the GDP of the Republic of Artsakh are given in the article. The economic policy of the RA aimed at the development of the previously existing economy branches and the opening of new promising industries. Artsakh is a predominantly importing country. The main partner in foreign trade is the Republic of Armenia.

ԱՆՆԱ ՓԱԽԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ԱԴԱՄԱՆԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՔԻՄԲԵՐԼԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՄԻՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Հիմնաբառեր. *կոնֆլիկտային ադամանդ, արյունոտ ադամանդ, մաքսանենգ ադամանդ, Քիմբերլի գործընթաց, համաշխարհային առևտուր, Քիմբերլի հավաստագիր*

XXI դարի վերջերին աֆրիկյան մի շարք երկրներում ադամանդի ապօրինի իրացումից ֆինանսավորվորող ապստամբությունները պատճառ հանդիսացան ադամանդի ծագումը հավաստող գլոբալ համակարգի ձևավորման համար: Քիմբերլի գործընթացի հավաստագրման ծրագիրը (ՔԳՀԾ) թույլ է տալիս անդամներին հավաստել չմշակված ադամանդների մատակարարումների «ոչ կոնֆլիկտային» լինելը և կանխել կոնֆլիկտային ադամանդների մուտքը համաշխարհային շուկա: 2003 թվականից սկսած՝ անմշակ ադամանդի բոլոր միջազգային մատակարարումներն ուղեկցվում են Քիմբերլի հավաստագրով, որը երաշխավորում է դրանց օրինականությունը: Ադամանդի համաշխարհային առևտուրը տեղի է ունենում միայն համակարգի մասնակիցների միջև:

Ադամանդի հումքի համաշխարհային առևտուրը 2003 թվականի հունվարի 1-ից կենտրոնացված է Քիմբերլի գործընթացի մասնակից երկրներում՝ ձևավորելով ադամանդի համաշխարհային շուկայի նոր կառուցվածք: «Քիմբերլի գործընթացի հավաստագրման ծրագիր» (ՔԳՀԾ) պաշտոնական անվանումը կրող համակարգի հիմքը դրվել է դեռևս 2000 թվականի մայիսին Հարավային Աֆրիկայի Քիմբերլի քաղաքում կայացած՝ ադամանդ արդյունահանող պետությունների ներկայացուցիչների առաջին համաժողովին, որը միտված էր կոնֆլիկտային ադամանդների առևտրի դադարեցմանն ու ադամանդի իրացումից ստացվող հասույթն ապստամբական շարժումների ֆինանսավորմանը ծառայեցնելու փորձերի կանխարգելմանը:

«Կոնֆլիկտային» կամ «արյունոտ» ադամանդ եզրույթը, ըստ ՄԱԿ-ի տերմինաբանության, բնորոշում է 1990-ականներից Ենթասահարային Աֆրիկայի երկրներում (Անգո-

լա, Սիերա Լեոնե, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Լիբերիա) տարածված ադամանդների ստվերային շրջանառությունը, որից ստացված հասույթն ուղղվում է զինված հակամարտությունների և ահաբեկչական գործողությունների ֆինանսավորմանը: Այդուհանդերձ, ադամանդներն ապստամբությունների ֆինանսավորման գլխավոր, բայց ոչ միակ աղբյուրն էին վերոնշյալ երկրներում. այդ նպատակին էր ուղղվում նաև այլ հանքահումքային ռեսուրսների (ոսկի, նավթամթերք, կոլթան (coltan), կոբալտ, պղինձ, փայտանյութ) ապօրինի իրացումից ստացվող հասույթը:

Քիմբերլի գործընթացի ձևավորման նախադրյալները: Անգոլայում քաղաքացիական պատերազմը տևել է երեք տասնամյակ՝ 1975-ից մինչև 2002 թվականները, որի ընթացքում զոհերի թիվը գերազանցել է 650.000-ը, Սիերա Լեոնեում հակամարտությունը շարունակվել է տասը տարի՝ 1991-2002 թթ. (75.000 զոհ), Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ԿԴՀ) քաղաքացիական պատերազմը սկսվել է 1998 թ. և ավարտվել 2002-ին (3-3.5 մլն զոհ): Բոլոր երեք երկրներում ապստամբական խմբերն իրենց պատերազմական գործողությունների (զենք ու զինամթերքի ձեռքբերման, զորքին վճարելու և կերակրելու, իրենց ռազմավարական դաշինքները պահպանելու) հետ կապված ծախսերը հոգում էին ադամանդի հումքի վաճառքի հաշվին[1]:

Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը (UNSC) բոլոր երեք երկրներում կոնֆլիկտային ադամանդների շրջանառությունն արգելող մի շարք բանաձևեր է ընդունել, որոնք միջազգային հանրության կողմից համարժեք աջակցություն չեն ստացել ադամանդի համաշխարհային շուկայի մասնակիցների տնտեսական շահի գերադասման պատճառով: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից դեռևս 1998 թ. ընդունված 1173 և 1176 բանաձևերով[2] էմբարգո է սահմանվել անգոլական ադամանդների ապօրինի վաճառքի նկատմամբ, ինչը, սակայն, արհամարհանքի է արժանացել ադամանդի առք ու վաճառքում ներգրավված ընկերությունների և միջազգային հանրության կողմից: Սիերա Լեոնեում ադամանդների ապօրինի վաճառքն արգելող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1306 բանաձևն ընդունվել է 2000 թ. հուլիսի 5-ին[3]: Սակայն, ինչպես և Անգոլայում, կոնֆլիկտային ադամանդների առք ու վաճառքը շարունակվել է՝ հակառակ ՄԱԿ-ի սահմանած էմբարգոյի: Ավելին, ադամանդի վաճառքն իրականացվում էր գլխավորապես Լիբերիայի միջնորդությամբ: Լիբերիան, որը հայտնի էր որպես ապօրինի ադամանդների և զենքի կուտակման, փողերի լվացման, ահաբեկչության և կազմակերպված հանցավորության այլ ձևերի թաքստոց, կարճ ժամանակում ապահովեց ադամանդի արտահանման այնպիսի ծավալներ, որոնք բազմակի անգամ գերազանցում էին սեփական արտադրական հնարավորությունները: Լիբերիայի ադամանդի արդյունահանման հզորությունն այդ ժամանակահատվածում գնահատվում էր տարեկան 100.000 – 150.000 կարատ, մինչդեռ Բելգիայի վիճակագրական աղբյուրները 1994-1998 թթ. ընթացքում

[1] Kayome M. (2005). "United Nations Resolutions and the Struggle to Curb the Illicit Trade in Conflict Diamonds in Sub-Saharan Africa". African Journal of Legal Studies. The Africa Law Institute. 2: 80–101.

[2] United Nations Security Council: Resolutions 1173 and 1176 (2001 June).

[3] United Nations Security Council: Resolution 1306 (2000, July 5).

գրանցել են շուրջ 31 մլն կարատ լիբերիական ադամանդի ներկրում, այսինքն՝ միջին հաշվով, տարեկան ավելի քան 6 մլն կարատ[1]: Ենթադրվում է, որ, այսպես կոչված, «լիբերիական» ադամանդների զգալի մասի իրական ծագման երկիրը Սիերա Լեոնեն էր կամ Անգոլան:

Տեղեկատվության զգալի անհամապատասխանություն կա նույնիսկ ադամանդ արտահանող և ներմուծող կողմերի միջև: Այսպես՝ միայն 1998 թ. Բելգիան արձանագրել է շուրջ 770.000 կարատ ադամանդի ներմուծում Սիերա Լեոնեից, այն դեպքում, երբ Սիերա Լեոնեի կառավարությունը նույն ժամանակահատվածի համար հայտարարագրել է ընդամենը 8.500 կարատի արտահանում Բելգիա[2]:

Միաժամանակ, որոշ երկրներում կիրառվող առևտրի գրանցման համակարգը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում կոնֆլիկտային ադամանդների առևտրի բացահայտման համար: Այսպես, օրինակ, ադամանդի համաշխարհային շուկայի առաջատարներից՝ Բելգիայում ադամանդի առք ու վաճառքի փաստաթղթավորման համար պատասխանատու “Diamond High Council” (“HRD”) ոչ առևտրային կազմակերպության գրանցման համակարգն առևտուր անող երկիրը նույնականացնում է ծագման երկրի հետ, այսինքն՝ որպես ադամանդի ծագման երկիր է գրանցում փաստացիորեն առևտուր անող երկիրը, ինչը բարդացնում է ադամանդի շարժի նկատմամբ վերահսկողությունը՝ միաժամանակ խոչընդոտելով կոնֆլիկտային ադամանդների առևտրի կանխարգելմանն ուղղված ջանքերը: Փաստորեն, կախված մեկ առևտրային կենտրոնից մյուսը կատարած «ճամփորդությունից», Անգոլայի, Սիերա Լեոնեի կամ ԿԴՀ ծագում ունեցող ադամանդները կարող էին գրանցվել որպես Բելգիա ներկրված Լիբերիայից, Գվինեայից, Իսրայելից, Հնդկաստանից կամ Միացյալ Թագավորությունից:

Ինչևիցե, հիմք ընդունելով Լիբերիայի առանցքային դերը Սիերա Լեոնեում ադամանդի հաշվին ֆինանսավորվող բռնությունների գործում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 2001 թ. մարտի 7-ին ընդունված 1343 բանաձևով[3] համընդհանուր էմբարգո սահմանեց լիբերիական ադամանդների առևտրի վրա՝ կոչ անելով բոլոր երկրներին խուսափել Լիբերիայից ուղղակի կամ անուղղակի կերպով անմշակ ադամանդների ներկրումից՝ անկախ նրանից, թե դրանք լիբերիական ծագում ունեն, թե ոչ: Միաժամանակ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պահանջում էր, որ Արևմտյան Աֆրիկայի ադամանդ արտահանող բոլոր երկրներում չմշակված ադամանդների առևտրում սահմանվի ծագման երկրի հավաստագրման պարտադիր պահանջ:

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, ըստ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան հաշվետվությունների, ադամանդի և այլ բնական ռեսուրսների՝ մաքսանենգ ճանապարհով առևտուրն իրականացնում էր ծովային ելք ունեցող աֆ-

---

[1] Kayome M. (2005). "United Nations Resolutions and the Struggle to Curb the Illicit Trade in Conflict Diamonds in Sub-Saharan Africa". African Journal of Legal Studies. The Africa Law Institute. 2: p.86.

[2] Smillie I., Gberie L. and Hazleton R. (2000). The Heart of the Matter: Sierra Leone, Diamonds and Human Security. (Ottawa, Partnership Africa Canada), p. 4.

[3] United Nations Security Council: Resolution 1343 (2001, March 7).

րիկյան երկրների (Տանզանիա, Քենիա, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Կոնգոյի Հանրապետություն) նավահանգիստների միջոցով: Ադամանդի խմբաքանակներն ուղեկցվում էին իբր ԿԴՀ օրինական կառավարության կողմից թողարկված կեղծ փաստաթղթերով՝ արտահանվելով հիմնականում Բելգիա, Նիդեռլանդներ և Հարավային Աֆրիկա: Ըստ մոտավոր հաշվարկների՝ ԿԴՀ անմշակ ադամանդների արտադրության մեկ երրորդը՝ տարեկան շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ[1], մաքսանենգ ճանապարհով ուղղվել է Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն և Կոնգոյի Հանրապետություն, ապա Հարավային Աֆրիկա, որտեղից էլ վաճառվում էր Բելգիայի, Նիդեռլանդների, Իսրայելի և Միացյալ Թագավորության ադամանդի առևտրի խոշոր կենտրոններին:

Ի լրումն ՄԱԿ-ի ջանքերի, 1999 թ. հոկտեմբերի 3-ին Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Իսպանիան, Հարավային Աֆրիկան և Նիդեռլանդները ներկայացնող 5 մարդասիրական ընկերությունների նախաձեռնությամբ մեկնարկեց «Ճակատագրական գործարք» (“Fatal Transaction”)[2] արշավը, որն ուղղված էր ապստամբ գրոհայինների կողմից վերահսկվող տարածքներից ադամանդի արտահանման կանխարգելմանը:

Այսպիսով՝ XXI դարի սկզբին բավարար հիմքեր էին ստեղծվել ադամանդի համաշխարհային շուկայի նկատմամբ վերահսկողության սահմանման համար: Քիմբերլի գործընթացի հավաստագրման ծրագիրը, որի ներդրմամբ այժմ կարգավորվում են ադամանդի տեղաշարժերը համաշխարհային տնտեսությունում, ենթադրում է անմշակ ադամանդների ծագման հավաստագրման և նույնականացման համընդհանուր համակարգ, որը ճանաչելի և կիրառելի է ադամանդի համաշխարհային արդյունահանման, արտահանման, ներմուծման կամ վերամշակման գործընթացներում որևէ կերպ ներգրավված բոլոր երկրների համար: Փաստացիորեն, 2003 թվականի հունվարից ադամանդի հումքի միջազգային մատակարարումների շղթայի բոլոր փուլերը (արտահանում, ներմուծում, ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար, տարանցիկ փոխադրում) ուղեկցվում են Քիմբերլի գործընթացի հավաստագրերով (ՔԳՀ), որոնցով երաշխավորվում է դրանց «ոչ կոնֆլիկտային» լինելը:

Ադամանդի համաշխարհային առևտրի արդի միտումները: 2017 թվականի հունվարի 30-ի դրությամբ Քիմբերլի գործընթացին մասնակից 54 կողմ ներկայացնում է 81 երկիր (Եվրամիության անդամ 28 երկիր[3] հանդես է գալիս որպես մեկ մասնակից), որոնց

---

[1] United Nations Security Council: (2001, Nov. 10). Addendum to the Report of the Panel of Experts on the Illegal Exploitation of Natural Resources and Other Forms of Wealth of the Democratic Republic of the Congo, p.43.

[2] Global Witness (2000). Publication of Conflict Diamonds: Possibilities for the Identification, Certification and Control of Diamonds. Last accessed: 19 May 2002, http://wwww.oneworld.org/globalwitness/diamonds.

[3] Մեծ Բրիտանիայի Եվրամիության կազմից դուրս գալու գործընթացի ավարտին Քիմբերլի գործընթացի մասնակից կողմերի թիվը կհասնի 55-ի (միաժամանակ, պահպանելով երկրների թիվը՝ 81), քանի որ այդ ժամանակ ադամանդի համաշխարհային առևտրում ակտիվորեն ներգրավված Մեծ Բրիտանիան հանդես կգա որպես ՔԳ առանձին մասնակից:

բաժին է ընկնում ադամանդի համաշխարհային արտադրության 99,8%-ը[1]: Հայաստանի Հանրապետությունը Քիմբերլի գործընթացին միացել է 2002 թ. դեկտեմբերին[2]:

2016 թ. Քիմբերլի գործընթացի մասնակից երկրների կողմից արդյունահանվել է ավելի քան 134 մլն կարատ անմշակ ադամանդ՝ 12.4 մլրդ ընդհանուր արժողությամբ: Ադամանդ արդյունահանող հիմնական երկրներն են Ռուսաստանը, Բոթսվանան, Կանադան, Հարավային Աֆրիկան, Անգոլան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը և Ավստրալիան: Ընդ որում, աշխարհի առաջատարների կազմը տարբերվում է ըստ ադամանդի արդյունահանման ծավալային և արժեքային ցուցանիշների: Ըստ ադամանդի կարատներով չափվող ծավալային ցուցանիշի՝ 2016 թ. տվյալներով առաջատար արդյունահանողներն են Ռուսաստանի Դաշնությունը (համաշխարհային արդյունահանման 30.08%-ը կամ 40.3 մլն կարատ ադամանդ), ԿԴՀ-ը (17.31% կամ 23.2 մլն կարատ), Բոթսվանան (15.29% կամ 20.5 մլն կարատ), Ավստրալիան (10.41% կամ 13.96 մլն կարատ) և Կանադան (9.72% կամ 13 մլն կարատ): Արժեքային արտահայտությամբ առաջատարը դարձյալ Ռուսաստանն է՝ համաշխարհային արդյունահանման 28.86% կամ 3,58 մլրդ ԱՄՆ դոլար արդյունահանման ցուցանիշով (գծապատկեր 1), որին հետևում են Բոթսվանան (22.95% կամ 2.85 մլրդ ԱՄՆ դոլար), Կանադան (11.27% կամ 1.40 մլրդ ԱՄՆ դոլար), Հարավային Աֆրիկան (10.07% կամ 1.25 մլրդ ԱՄՆ դոլար) և Անգոլան (8.7% կամ 1.08 մլրդ ԱՄՆ դոլար):



Գծապատկեր 1. ***Ադամանդի համաշխարհային արդյունահանման առաջատարները 2016 թ.***[3]

[1] http://www.kimberleyprocess.com/en/about

[2] Ա. Փախլյան, Հայաստանի Հանրապետությունը «ոչ կոնֆլիկտային ադամանդների» համաշխարհային շուկայում // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդես, թիվ 3(31), 2013թ., Եր.: «Տնտեսագետ» հրատ., էջ 118-132:

[3] Գծապատկերը կազմվել է՝ հիմք ընդունելով ՔԳ-ի 2016 թ. հաշվետվությունները՝ https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2016/2016Charts.pdf:

Ադամանդի արդյունահանման ծավալային և արժեքային ցուցանիշներով առաջատար երկրների անհամապատասխանությունը հիմնավորվում է արդյունահանվող ադամանդների մաքրությամբ և որակական հատկանիշներով պայմանավորված գնային տարբերություններով, մասնավորապես՝ բերված տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ Բոթսվանայում, Կանադայում, Հարավային Աֆրիկայում և Անգոլայում արդյունահանվում են բարձրորակ, հազվագյուտ և հետևապես՝ միջինից էապես բարձր արժեք ունեցող ադամանդներ, մինչդեռ ԿԴՀ-ում, Ավստրալիայում և Ռուսաստանում արդյունահանվող ադամանդների միավոր կարատը համաշխարհային միջին մակարդակից ավելի ցածր է գնահատվում:



Գծապատկեր 2. ***Ադամանդի համաշխարհային արտահանման առաջատարները 2016 թ.***

Ըստ էության, ադամանդի համաշխարհային արդյունահանման առաջատարները պետք է հանդես գան նաև արտահանման ամենամեծ ծավալներն ապահովող երկրների դերում, մինչդեռ միասին ադամանդի համաշխարհային արտադրության 52%-ն ապահոված Ռուսաստանին (4,393 մլն ԱՄՆ դոլարի արտահանում) ու Բոթսվանային (5,600 մլն ԱՄՆ դոլարի արտահանում) բաժին է ընկել ադամանդի արտահանման ընդամենը 21%-ը, այն դեպքում, երբ ադամանդի արտահանման առաջատարների շարքում են հայտնվել այնպիսի երկրներ, որոնք բացարձակապես ադամանդի սեփական հանքեր չունեն: Այսպես՝ Եվրամիությունն ապահովել է ադամանդի հումքի համաշխարհային արտահանման 27%-ը (13,013 մլն ԱՄՆ դոլար), ԱՄԷ-ն՝ 18%-ը (8,595.5 մլն ԱՄՆ դոլար), իսկ Իսրայելը՝ համապատասխանաբար 7%-ը (3,222.8 մլն ԱՄՆ դոլար) (գծապատկեր 2):

Փորձը ցույց է տալիս, որ ադամանդ արդյունահանող առաջատար երկրները հիմնականում արդյունահանված հումքը արտահանում են այլ երկրներ՝ վերամշակման նպատակով: Իրենց սեփական երկրներում, իրենց իսկ ընկերություններում ադամանդի մշակման ծավալներն այդքան էլ մեծ չեն՝ համեմատած վերամշակման ավանդական կենտրոնների, ինչպիսիք են Հնդկաստանը և Իսրայելը: Արդյունահանված ադամանդներն իրենց վերամշակման կենտրոններ են հասնում հիմնականում 3 երկրի միջոցով՝ Իսրայել, Բել-

գիա (Անտվերպեն) և ԱՄԷ (Դուբայ), որոնք լրացուցիչ շահույթ են ստանում ադամանդի վերավաճառքից:



Գծապատկեր 3. ***Ադամանդի համաշխարհային ներմուծման առաջատարները 2016 թ.***

Ադամանդ ներմուծող աշխարհի առաջատարների շարքում են հայտնվել Հնդկաստանը (34% կամ 16,665.6 մլն ԱՄՆ դոլար), Եվրամիությունը (27% կամ 13,195.1 մլն ԱՄՆ դոլար), ԱՄԷ-ն (13%), Իսրայելը (8%) և Չինաստանը (4%), որոնք հիմնականում հանդես են գալիս միաժամանակ որպես ադամանդի խոշոր սպառողներ և վերամշակողներ:

АННА ПАХЛЯН

МИРОВАЯ ТОРГОВЛЯ АЛМАЗОВ В СТРАНАХ-УЧАСТНИКАХ КИМБЕРЛИЙСКОГО ПРОЦЕССА: ТЕНДЕНЦИИ И ВЫЗОВЫ

Ключевые слова: *конфликтные алмазы, кровавые алмазы, контрабандные бриллианты, Кимберлийский процесс, мировая торговля, сертификат Кимберли*

В конце XXI века восстания в нескольких африканских странах, финансируемые незаконной продажей алмазов, привели к формированию глобальной системы сертифицирования происхождения алмазов. Система сертификации Кимберлийского процесса (ССКП) позволяет ее членам сертифицировать поставоки необработанных алмазов как «бесконфликтные» и предотвратить доступ конфликтных алмазов на мировой рынок. С 2003 года все международные поставки алмазного сырья сопровождаюся сертификатом Кимберли, гарантирующим их легальность. Мировая торговля алмазов происходит только между участниками системы.

ANNA PAKHLYAN

WORLD TRADE OF DIAMONDS IN THE KIMBERLY PROCESS PARTICIPATING COUNTRIES: TRENDS AND CHALLENGES

Key words: *conflict diamonds, blood diamonds, smuggled diamonds, Kimberley Process, world trade, Kimberly certificate*

At the end of the 21st century, insurrections in several African countries, funded by the illegal sale of diamonds, led to the formation of a global certification system for the origin of diamonds. The Kimberley Process Certification Scheme (KPCS) enables its members to certify shipments of rough diamonds as 'conflict-free' and prevent conflict diamonds from entering the world market. Starting from 2003 all international shipments of rough diamonds are accompanied by a Kimberley Certificate guaranteeing their legality. Participants can only legally trade with other participants.

ԳԱՅԱՆԵ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ
Դասախոս, ԵՊՀ

ՀՀ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *կենսաթոշակային ֆոնդեր, ակտիվների կառուցվածք, պարտքային գործիքներ, բաժնային գործիքներ, ֆոնդերի եկամտաբերություն*

Կուտակային բաղադրիչի ներքո գործող վեց պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները ներդրվում են ՀՀ և արտասահմանյան ֆինանսական գործիքներում՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի սահմանափակումների: 2014-2016 թվականներին կենսաթոշակային ֆոնդերի արտասահմանյան ներդրումները կապարվել են պարտքային և բաժնային գործիքների ուղղվածությամբ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների տեսքով՝ ապահովելով ներդրված ակտիվների դիվերսիֆիկացիա (բազմազանեցում)՝ ռիսկերի հավասարակշռման և համարժեք եկամտաբերության սկզբունքներին համահունչ:

2014 թվականից ՀՀ-ում գործող բազմաստիճան կենսաթոշակային համակարգի շրջանակներում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ երկու ընկերություն՝ «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն և «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն, առաջարկում են երեք տիպի պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր՝ կայուն եկամտային, պահպանողական և հավասարակշռված, որոնք միմյանցից տարբերվում են ներդրումային ռազմավարությամբ, մասնավորապես՝ բաժնային արժեթղթերում ներդրումների սահմանաչափով: